ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ № 2

ՀԱԱՀ-ԷԱՃԱՊՁԲ-25/93 ԾԱԾԿԱԳՐՈՎ ԳՆՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ

ք. Երևան **25 սեպտեմբերի 2025թ.**

2025թ. սեպտեմբերի 19-ից 25-ը ՀՀ, ք. Երևան, Տերյան 74 հասցեում գտնվող «Հայաստանի ազգային ագրարային համալսարան» հիմնադրամի (այսուհետ՝ Հիմնադրամ) շենքում տեղի ունեցավ շինարարական ապրանքների և սանիտարական տեխնիկայի ձեռքբերման ՀԱԱՀ-ԷԱՃԱՊՁԲ-25/93 ծածկագրով գնման ընթացակարգի (այսուհետ՝ Ընթացակարգ) գնահատող հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) նիստը:

Հանձնաժողովի նիստին մասնակցում էին Հանձնաժողովի հետևյալ անդամները.

Կ. Զախոյան՝ «Հայաստանի ազգային ագրարային համալսարան» հիմնադրամի Տնտեսական վարչության պետ, գլխավոր ինժեներ,

Ա. Ներսիսյան՝ «Հայաստանի ազգային ագրարային համալսարան» հիմնադրամի Բանվորական աշխատանքների համակարգող,

Ն. Մկրտչյան՝ «Հայաստանի ազգային ագրարային համալսարան» հիմնադրամի Տնտեսական վարչության առաջատար մասնագետ:

Հանձնաժողովի նիստը նախագահում էր Կ. Զախոյանը: Հանձնաժողովի նիստին ներկա էր Հանձնաժողովի քարտուղար Ա. Սարգսյանը՝ «ՓՐՈՄՈՒՇՆ» ՍՊԸ-ի ներկայացուցիչը:

Հաշվի առնելով, որ Հանձնաժողովի կազմը բաղկացած է երեք անդամից, իսկ Հանձնաժողովի նիստին մասնակցում էին Հանձնաժողովի բոլոր անդամները, հետևաբար՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 04-ի N 526-Ն որոշման 1-ին կետով հաստատված կարգի 26-րդ կետի 2-րդ ենթակետով սահմանված պահանջների համաձայն Հանձնաժողովի նիստը համարվեց իրավազոր և հայտարարվեց բացված:

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ

1. Գնման հայտով սահմանված՝ ընթացակարգի շրջանակում գնվելիք գնման առարկաների գների, աճուրդի առաջարկված մեկնարկային գների և այլ անհրաժեշտ տեղեկությունների մասին
2. Ընթացակարգին ներկայացված հայտերը գնահատելու մասին:
3. Ընթացակարգը չկայացած հայտարարելու, հայտարարության տեքստը հաստատելու մասին:

4. Կատարված հարցումների, պարզաբանումների, հիմնավորումների և հրավերում կատարված փոփոխությունների, հակաօրինական գործողությունների, ներկայացված բողոքների մասին:

1. ԳՆՄԱՆ ՀԱՅՏՈՎ ՍԱՀՄԱՆՎԱԾ՝ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՇՐՋԱՆԱԿՈՒՄ ԳՆՎԵԼԻՔ ԳՆՄԱՆ ԱՌԱՐԿԱՆԵՐԻ ԳՆԵՐԻ, ԱՃՈՒՐԴԻ ԱՌԱՋԱՐԿՎԱԾ ՄԵԿՆԱՐԿԱՅԻՆ ԳՆԵՐԻ ԵՎ ԱՅԼ ԱՆՀՐԱԺԵՇՏ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

2025 թվականի սեպտեմբերի 19-ին, ՀՀ, ք. Երևան, Տերյան 74 հասցեում գտնվող «Հայաստանի ազգային ագրարային համալսարան» հիմնադրամի շենքում ժամը 10:00-ին նախագահը նիստը հայտարարեց բացված և հայտարարեց գնման առարկաների վերաբերյալ հետևյալ տեղեկատվությունը.

Հ/Հ	Գնման առարկայի անվանումը	Աճուրդի մեկնարկային գին (ՀՀ դրամ)	Մեկնարկ	Գնման հայտով սահմանված ընդհանուր առավելագույն գինը (ՀՀ դրամ)
1	Մետաղապլաստե դռան փականի բռնակներ	-	Չկայացած	20000
2	Մետաղապլաստե պատուհանի բռնակ	-	Չկայացած	3500
3	Մետաղապլաստե պատուհանի բռնակ	-	Չկայացած	9000
4	Եվրո դռների փական	-	Չկայացած	9750
5	Ցեմենտ	-	Չկայացած	21000
6	Գիպսային շաղախ	-	Չկայացած	3500
7	Ծեփամածիկ գիպսային	-	Չկայացած	9000
8	Մեխ 20մմ	-	Չկայացած	1600
9	Մեխ 40մմ	-	Չկայացած	1600
10	Մեխ 100մմ	-	Չկայացած	3200
11	Մեխ 120մմ	-	Չկայացած	2400
12	Ներկի լուծիչ	-	Չկայացած	3125
13	Օլոֆ	-	Չկայացած	2200
14	Կանիֆոլ	-	Չկայացած	1800
15	Պոլիպրոպիլենային խողովակի կցամաս 20մմ, 90°	-	Չկայացած	1000
16	Պոլիպրոպիլենային խողովակի կցամաս Φ20մմ	-	Չկայացած	18000
17	Պոլիպրոպիլենային խողովակի կցամաս Φ25 մմ 90°	-	Չկայացած	650
18	Պոլիպրոպիլենային խողովակի կցամաս Φ20մմ 45°	-	Չկայացած	500

Ընթացակարգի հայտերի ներկայացումն ու բացումը, ինչպես նաև՝ հակադարձ աճուրդի անցկացումը նախատեսված էր https://eauction.armeps.am/ կայքի միջոցով՝ հրավերով և համակարգով սահմանված օրը և ժամին:

Հանձնաժողովը որոշեց.

1. Ներկայացած տեղեկատվությունն ընդունել ի գիտություն:

Կողմ՝ 3, դեմ ՝ 0:

2. ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ՀԱՅՏԵՐԸ ԳՆԱՀԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

2025 թվականի սեպտեմբերի 19-ին Հանձնաժողովն արձանագրեց, որ համակարգի միջոցով գնահատման ենթակա հայտեր առկա չեն:

Կողմ՝ 3, դեմ ՝ 0:

3. ԸՆԹԱՑԱԿԱՐԳԸ ՉԿԱՅԱՑԱԾ ՀԱՅՏԱՐԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով վերոգրյալը, 2025 թվականի սեպտեմբերի 25-ին Հանձնաժողովը որոշեց.

1. Հիմք ընդունելով ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին կետի 3-րդ ենթակետով սահմանված պահանջները՝ Ընթացակարգը հայտարարել չկայացած:
2. Հաստատել համակարգի կողմից տրամադրված հայտարարության տեքստերը:

Կողմ՝ 3, դեմ ՝ 0:

4. ԿԱՏԱՐՎԱԾ ՀԱՐՑՈՒՄՆԵՐԻ, ՊԱՐԶԱԲԱՆՈՒՄՆԵՐԻ, ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ԵՎ ՀՐԱՎԵՐՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ, ՀԱԿԱՕՐԻՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ, ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Հանձնաժողովը արձանագրեց, որ.

1. Ընթացակարգի հրավերում փոփոխություններ չեն կատարվել:
2. Գնման վերաբերյալ հարցումներ, պարզաբանումներ չեն եղել և հիմնավորումներ չեն պահանջվել:
3. Գնման գործընթացի շրջանակներում հակաօրինական գործողություններ չեն հայտնաբերվել:
4. Գնման գործընթացի վերաբերյալ ներկայացված բողոքներ չեն եղել և դրանց վերաբերյալ կայացված որոշումներ չեն ընդունվել:

Կողմ՝ 3, դեմ ՝ 0:

Հանձնաժողովի նախագահ՝

Կ. Զախոյան _____

Հանձնաժողովի անդամներ՝

Ա. Ներսիսյան _____

Ն. Մկրտչյան _____

Հանձնաժողովի քարտուղար՝

Ա. Սարգսյան _____